ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1129 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի հոկտեմբերի 10-ի N 747-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 98-Ն որոշման (այսուհետ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 3-րդ կետում «սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը» բառերը փոխարինել «բարեկեցության նախարարությունը» բառերով.

2) որոշման N 2 հավելվածում՝

ա. «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար» բառերը փոխարինել «ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարար» բառերով,

բ. «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալ» բառերը փոխարինել «ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալ» բառերով,

գ. «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ» բառերը փոխարինել «ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների հիմնահարցերի քաղաքականության վարչության պետ» բառերով,

դ. «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)» բառերը փոխարինել «ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների հիմնահարցերի քաղաքականության վարչության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի քաղաքականության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

13.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ